

ԱԶԳԱՅԻՆ ՎԷՊ

Մ. ԱՔԵՂԵԱՆԻ

(Շարունակութիւն 1)

«Սասունցի Դաւիթ» կամ «Մհերի դուռ», Կ. Պոլիս, 1874, եւ «Դաւիթ եւ Մհեր», Շուշի, 1889, ժողովրդական պատումներն իբրեւ կէս-պատմական եւ կէս-դիւ-
ցազնական հին վէպ:

Ե.

Մենք չ'ունինք Աբամելիքի և Սանասարի անմիջական լաջորդների
ձիւղերը, որ իմանալինք վէպի պատմութեան շարունակութիւնը և համե-
մատէինք Աղձնեաց բղիշխների և Արծրունեաց պատմութիւնների հետ 1)։

1) Տե՛ս «Մուրճ»-ի 10-րդ համարը:

2) Հ. Սրուանձտեանի վարկանտով Դաւիթն Աբամելիքի որդին է դուրս գալիս,
որ վարկանտի անձնութիւն է, այն ինչ մեր վարկանտով Դաւիթն Աբամելիքի դար-
մի վերջիններից է: Թէ Դաւիթն Աբամելիքի որդին չէ, այդ երևում է և նորանից,
որ Ձէնով Յովանը և Յւան Վէրգօն, որ՝Հ. Սրուանձտեանի վարկանտով Աբամելիքի
որդիներն են, իսկ Դաւիթ եղբայրները, մեր վարկանտով, Դաւիթ Հօրեղբայրներն
են: Որպէս զի մեր վարկանտով Դաւիթն Աբամելիքի որդին լինէր, պէտք է որ Ձէ-
նով Յովանը և Յւան Վէրգօն Աբամելիքի եղբայրները լինէին, իսկ այդ հակառակ
է պատմութեան և վէպին, որոնք վկայում են թէ Հայաստան են եկել միայն երկու
եղբայր՝ Աբամելիքն և Սանասարը: Քեռի Թորոսը, որ Հ. Սրուանձտեանի վարկան-
տով դործող անձնաւորութիւն է ներկայանում Աբամելիքի և Դաւիթ ժամանակ,
թերեւ և Դաւիթի յետոյ Մկերի ժամանակ, որովհետեւ Աբամելիքը ծերանում և
մեռնում է, Դաւիթը սպանում է, իսկ նա դեռ կենդանի է և կռււ է մտնում:—Էը
կայ մեր վարկանտի մէջ. և այդ աւելի քնական է, որովհետեւ Քեռի Թորոսը չէր
կարող այդքան երկար ապրել: Քեռի Թորոսի մեր վարկանտում չերեւան իսկ վկա-
յում է, որ Դաւիթն Աբամելիքից ժամանակով շատ հեռու է, այն ինչ Հ. Սրուանձ-
տեանի վարկանտով, որովհետեւ Դաւիթն Աբամելիքի որդին է, Քեռի Թորոսը նորա
ժամանակ կարող էր կենդանի լինել: Մենք կարծում ենք, որ Թլօր Դաւիթը Թալան
Դաւիթի որդին պետի լինել, ինչպէս որ պատմող մոկացին կասկածանքով ասում էր:

Աբառնէլքի շառաւիղներէց վերջիններէն՝ Կաւթի և Մհերի վէպի մէջ չէ երևում ազգային պատմութեան մէջ լիշատակած Աղձնեաց կամ Արծրունեաց արարքներէն հետ նմանութիւն.—գուցէ լինի էլ, բայց մեզ չափնի չէ—միայն թէ ուրիշ պատմական կէտեր երևում են, և ալդ վերաբերում է աւելի մեր նոր ժամանակի, միջնադարեան պատմութեանը, երբ որ Աղձնեաց բռնիքներն ալ ևս չը կալին, իսկ Արծրունիք Վասպուրականում թագաւորութեան հասել և ընկել էին:

Յատնի է, որ միջին, և աւելի նոր դարերում հալոց աշխարհը բաժանած է եղել բազմաթիւ մեծ և փոքր իշխանների մէջ. մեր երկիրը մի իշխանական միութիւն չէ կազմել և Բագրատունեաց կարճատե թագաւորութեան ժամանակ իսկ, երբ որ միայն մի քանի իշխանութիւններ, աւելի զօրացած լինելով, թագաւոր անուամբ անկախ դրութիւն էին ձեռք բերել, չ'ունենալով իրանց վերայ հին պարսկական, կամ լոնական և արաբական գերիշխանութիւնը և ոչ ենթարկւելով Հայաստանի հակակաճ թագաւորութիւններէց մէկին կամ միւսին: Բագրատունեաց անկումից լիսուց, երբ որ թուրքերն և թաթարները սկսում են արշաւել Հայաստան, ԺԱ—ԺԶ դարը, երբ որ երկիրը բաժանուցաւ օսմանցոց և պարսից մէջ, Հայաստանի քաղաքական բաժանական դրութիւնն աւելի ևս խառնւում է. երկրում տիրում է դրեթէ կառարկալ անիշխանութիւն. շատանում են բազմաթիւ մանր իշխաններ, որոնք մասամբ հալոց հին նախարարական տոհմերի լաջորդութիւններն էին, մասամբ ևկամուտ, օտար. Ալդ մանր իշխանները տիրելով մի գաւառի, քաղաքի կամ դիւղի, կազմում էին փոքրիկ ինքնագլուխ բռնապետութիւններ, որոնք մեծ մասամբ անկախ դիրք ունենալով, քիչ անգամ ենթարկւում էին լոնաց կալսերներին կամ պարսից նոր կազմած թագաւորութեանը: Ալդ մանր իշխանները շարունակ կռիւներ էին մղում իրար դէմ և Հայաստանից դուրս նստող թագաւորների դէմ. իրարու երկիր ձեռքէ ձեռք իւրում էին, որով և երկիրը գտնւում էր միշտ խռովալոյզ դրութեան մէջ: ¹⁾ Հայաստանի հիւսիսային մասը միայն, մի առժամանակ՝ լիւրաց թագաւորների ձեռքն անցնելով, խաղաղութիւն և ապահովութիւն էր վայելում:

Բագրատունեաց անկումից լիսուց հարաւային Հայաստանի հալ իշխանութիւններից նշանաւոր է եղել Տօրոսեան լեռների մէջ Սասնու իշխանութիւնը: Սասնուում նստում էին Մամիկոնեանների սերունդ համարւող իշխաններ, որոնք միւսների պէս կռիւներ էին տալիս օտարների դէմ և, շնորհիւ երկրի ամուր դիրքին ու իրանց անձնական քաջութեանը, պահպանում էին անկախութիւն, որով և Սասունն իւր շրջականերով ներ-

¹⁾ Հ. Ալիշանը «Շնորհալի և Պարագայ իւր» գրքում լաւ նկարագրած է Հայաստանի այս խառնաշփոթ դրութիւնը ԺԱ. և ԺԲ. դարերում:

կալանում էր իբրև միակ կենդրոն հպկական աղատ իշխանութեան, ԺԱ. դարում Սասնու իշխաններից Նշանաւոր է եղել Թոռնիկ Մամիկոնեանը, որի պատմութիւնը աւելորդ չի լինել դեռևս ալատեղ իբրև պատկեր սասունցոց վարած պատերազմների ընդդէմ օտարներին և, եթէ ոչ իբրև պատմական հիմք Դաւթի վէպին, գէթ իբրև այն անձնաւորութիւններից մէկը, որոնց արարքների ազդեցութեան տակ փոփոխութիւն է կրել Դաւթի վէպը, որ աւելի հին պէտք է լինի:

Մամիկոնեան Մուշեղի որդի քաջ իշխան Թոռնիկն իշխում էր Սասունին և Տարօնի մի մասին. նա նստում էր Սասնու գաւառի Աշմուշատ գիւղում, որ Սասուն քաղաքի մօտ է: 1055—1058 թւին ամբողջ Հայաստանը աւերում է թաթարների և պարսից թագաւոր Տուղրիլի զօրքերի ձեռքով. միակ ապահով տեղը հայերի համար Սասունն էր: Աւերիչ խմբերից մէկը գալիս է Տարօն և աւերում է ս. Կարապետի վանքը՝ «Լուսալ զապ իշխանին հաղոց՝ զօրաւոր և քաջ որդին Մուշեղա՝ Թոռնիկն և ժողով արարեալ զամենայն Սասունս՝ հասանէր ի վերայ զօրացն ալաղգեաց» (Մ. Ուռհապեցի. Մասն Բ. հատ. ԶԱ.): Թշնամիներն իրանց բաղմութեամբ նեղում են սակաւաթիւ սասունցիներին. բայց վատը Թոռնիկը կանչում է. «Գլակալ վանք, ս. Կարապետ, հասի՛ր մեզ ջօգնութիւն» և հայերը զօրանալով լաղթում են ալաղգիներին¹:

1073 թ. ազգով հալ և կրօնքով լոյն փլաւառու լուծաց զօրավարը ապստամբում է լուծաց կալորից և իւր դրօշակի տակ հաւաքելով հայերից և ուրիշ ազգերից, տիրում է Զորրորդ—Հալքին (Արածանու և Հիւսիսային Նիբրատի հովտում), Աղձնեաց արևմտեան մասին, փոքր Հայաստանից Նրրորդ—Հալքին և ուրիշ կողմերի: Նա գալիս, բնակում է Մշար աւանում և աջնտեղից մարդ է ուղարկում Սասնու Թոռնիկ իշխանին, որ գալ, հնազանդի իրան: Թոռնիկը ծիծաղում և ասում է. «Ահաւոր բնաւ ես ոչ տեսանեմ զերեսս ճորա»): Եւ ասեն ցթոռնիկ կոչնականքն փլաւառուսին թէ. «Ահա գալ բաղում զօրօք ի վերայ քո և տապալեալ աւերեսցէ զամենայն գաւառս քո»): Ասէ Թոռնիկ. «Եւ քանի՞ զօրք փլաւառուսին»): Ասեն արքն. «Իբրև քսան հազար»): Ասէ. «Են իմ հազար ձիաւոր»):—Եւ դարձոյց զհրեշտակսն ամօթով վտաս—փլաւառոսն ստիպում է Գրիգոր Վկալասէր կաթողիկոսին, որ դնալ, համողէ Թոռնիկին գալ իրան հնազանդել. «ապա թէ ոչ, ի սուր սուսերի մաշեմ զերկիր ճորա: Բայց քաջն Թոռնիկ ոչինչ անսացեալ բանիցն, ճատէր անշարժ ի տեղուջ իւրում... Գիտացեալ փլաւառեալ թէ ոչ գալ առ ինքն Թոռնիկ, էառ զզօրս իւր և պատրաստեցաւ զճալ ի վերայ ճորա: Ժողովեալ և Թոռնկալ զամենայն արս գաւառին Սասնու՝ վստուհ հազար հետեակաց և վեց հազար հեծելոց, եկն

1) Զամէհան, Եփատ. հայոց, Բ, Հատ. եր. 966, Աբ. Լաստ, ԻԱ ԳԼ.

փութանակի ի ձաղաղ—ջուր։ Եւ կացիալ անդ աւուրս ինչ՝ իբրեւ ետես, թէ՛ լամէ՛ դալ փխլառտոս, վարկաւ թէ՛ դուցէ՛ դարձեալ իցէ՛ փտս, և կամ տակաւին անաղանի։ Եւ զի չունէր բաւական պաշար անչափ զօրաց, դարձուց փտս զբազմութիւն նոցա և ինքն հաղար ձիաւորօք միայն չուարար դառնալ ի քաղաք իւր Վշմուշատ. և ի դնալ նորա պատահեցան ի ճանաղարհի զօրքն փխլառտեալ ի Հանձիթ դաւառի... Զայն իբրեւ ետես Թոռնիկ, դահի հարաւ լուծ, զի ոչ կարէր խուսել փրեսաց նոցա և պատերազմել երկնչէր, զի սակաւ էին զօրք իւր. ապա լամենալն կողմանց անճարացեալ նորա, ապաւինեցաւ Վստուած և ի բարեխօսութիւն ս. Կարապետին Յովհաննու, և խրախուս բարձեալ արձակեցաւ անհնարին սաստկութեամբ ի վերալ նոցա հանդերձ հաղարաւն... և ի քթթել ական ցիր և ցան կացուց զանչափ բազմութիւն նոցա և կոտորեաց զբազումս ի նոցանէ... իսկ փխլառտոս սակաւ արամբք փախստեալ անկաւ ի Խարբերդ»։

Սորանից փտող փխլառտոսին միանում է Ամիր—Քափր անուշով մի պարսիկ իւր զօրքով, և նորա հետ խօսք կապելով, գալիս է Թոռնիկի սահմանները, մարդ է ուղարկում Թոռնիկին, խոստանում է դաշինք կապել իւր և նորա մէջ, երդում է տալիս, և նորա ծառաներից մի քանիսին մեծ տուրքերով հաւանեցնում է, որ նորան չորդորեն՝ դալ իւր մօտ։ Թոռնիկը խաբւում է և երեք մարդով դնում է Քափրի մօտ, որ մեծ ուրախութիւն է տալիս Թոռնիկի պատւին։ «Եւ լորժամ զուարճացեալ կալին ամենեքեան ի ինջուս անդ, լանկարծակի դիմեաց Քափրն ի վերալ Թոռնկալ սրով սպանանել զնա։ Իսկ Թոռնիկ չուանելով ինչ ի ձեռին, վանեաց աջու ձեռամբ զբազուկ նորա և ձախտիլն առեալ զփոքրիկ դանակ մի ի սեղանոց անտի՝ նհար ընդ փար նորա, և ի վալթել աղեաց նորին ի վալ՝ անդէն սատակեցաւ։ Դիմեալ ապա ի վերալ ալլոց, որք կալին անդ՝ ձգեաց զձեռս իւր ի գլուխս նոցա, զորս և ընդհարեալ ընդ միմեանս ուժով սաստկութեան բազկաց իւրոց՝ խորտակեալ սատակեաց զնոսա. և ելեալ անտի փութալը դնալ ի քաղաք իւր Վշմուշատ։ Զայն տեսեալ զօրացն Քափրալ՝ ցրուեցան և փախան անտի. իսկ մի ոմն ի նոցանէ Թագուցեալ ի ծածուկ տեղւոջ՝ առ որով ունէր անցանել Թոռնիկ, եհար նետիւ ընդ սիրտ նորա և սպան զնա» (Զամէեան Բ., 997—999 եր. Մ. Ուռհայեցի. մասն Բ. հատւած ձգ—ձէ)։

Զ.

Դաւթի և Մհերի վէպի մէջ պատկերանում է Հալաստանի և մասնաւորապէս Սասնու սոյն միջնադարեան վիճակը. վէպի հիմնական նիւթը կազմում է Սասնու տէրերի պատմութիւնը, Դաւիթը վէպի մէջ ներկայանում է իբրեւ ազատ, ազնւական տան ժառանգ. նա թէպէտև հորթարած է, բայց ազնւական տան հորթարած է, այն ինչ նորա ընկեր հորթարածն

ասում է. «Այս լէ քո պապու (հօր) գեղի հորթարածն եմ, ու իղա՝ ուսմկալ (սամիկների) հորթերն են»։ Դաւիթը տիրաբար է վարում ուսմիկների հետ. նա խանդութ խաթունին ասում է. «Այս լէ Սասմալ քաղաքի տէրն եմ»։ Նորա հօր տունը մեծ տուն է, և ոչ հասարակ մարդու տուն. մի խօսքով՝ նա իշխան է, կատարեալ իշխան, ոչ թէ իւր ուժի համար, ալ Նորա համար, որ նա ծագում է հին իշխանական տնից, որ Սասնու տներն են եղել։

Վէպի մէջ ամենից առաջ աչքի է ընկնում ալն, որ Հալաստանը բաժանած է բազմաթիւ մանր իշխանների մէջ։ Ազդ բաժանումը կար ազգային վէպի և առաջին ձևի մէջ. բայց ալնտեղ պատկերանում էր հին դարերի բաժանումը նախարարների մէջ՝ մի թագաւորի իշխանութեան տակ, որովհետեւ երկրում կար մի թագաւոր, Կապուտկոդի թագաւորը, որ ընդի հակական էր և Հալաստանում էր նստում,—իսկ Դաւիթի և Մհերի վէպի մէջ ներկայանում է ալն մանր բաժանումներն իրար թշնամի իշխանների մէջ, որ եղել է Հալաստանում Բագրատունեաց անկումից յետոյ։ Սասմալ քաղաքի, Մարալ քաղաքի տէրերը, Չմշկիկ-Սուլթանը, որ հաւանականօրէն Չմշկածագի (Հիւս. և Հար. Սփրատների խառնուրդին մօտիկ) տէրը պիտի լինի, Կաղզուանու ամիրան (Խանդութ խաթունի հայրը), Գոհար խաթուն, Խլաթեցիները,—ամեն մէկը հանդիսանում է իբրեւ մի ինքնագլուխ տիրապետ, որ ոչ ոքի իշխանութեանը չէ ենթարկւում, Նրկրում չը կալ մի թագաւոր, որին հնազանդէին ալն մանր բռնակալները, որի շուրջը խմբէին հզօր դիւցազունները. թագաւոր անունով դուրս է գալիս միայն Հալէբալ թագաւորը, որ Հալաստանից դուրս է նստում։ Նրկրի մէջ տիրում է ընդհանուր խառնակութիւն և անիշխանութիւն, որովհետեւ ալն մանր տիրապետները շարունակ կուռ են անում իրար հետ և իրար երկիր աւերում։ Մարամելիքը Մարութալ բանձրիկ Աստուարածինն է աւերում, Թուան Դաւիթը՝ վրէժն առնելու համար՝ Մարալ քաղաքի վերջին կատուն սպանում։ Մի ուրիշ Մարամելիք անեղ բանակով Սասմալ քաղաքի վերալ է գալիս, որ աւերի, տանի, Մարալ քաղաքի մօտ նոր քաղաք շինի. Թլօր Դաւիթն ալն Մարամելիքին սպանում է և բանակը ցրում։ Մանր իշխանները Հալէբալ թագաւորի առաջնորդութեամբ պաշարում են Կաղզուանը, Չմշկիկ Սուլթանը Դաւիթի և Խանդութ խաթունի դէմն է դուրս գալիս կուռի, Խլաթեցիները մինչև անգամ առանց պատճառի, իբրեւ ասպատակաւորներ, Դաւիթի ճանապարհը կտրում են. Մհերը Խլաթ քաղաքն է աւերում. Գոհար խաթունն ու Մհերը աւերում են Հալէբալ քաղաքը, որի թագաւորը եօթ տարի կուռում էր Գոհար խաթունի հետ,—մի խօսքով վէպի մէջ երկրում տիրում է ընդհանուր շփոթմունք, աւերմունք, և կհանքի անապահովութիւն—նոյն դրութիւնը, որի մէջ էր Հալաստանը Բագրատունիներից յետոյ։ Վէպի մէջ նոյն իսկ փշտակում է և վրացոց տիրապետութիւնը Հալաստանի վերալ. Քաւոր Գորգիզը (վիրական անուն) փահ-

լուանների դաւադրութիւնը Դաւթի դէմ Դաւթին իմացնելու համար առակի ձեռով ասում է. «Հոգի շնատուն է, վրաստուն չէ», որով ուզում է ասել, թէ ալտեղ վրաստուն չէ, ուր կարելի է կեանքի ապահովութիւն ունենալ, ալ շնատուն է, ամենայն բոլոր կարելի է շնասի, վտանգի ապասել:

Վէպի մանր իշխաններից ամենից զօրեղը Սասնու տէրերն են, ինչպէս և պատմութեան մէջ. նրանք բնիկ ազգալին են, ժողովրդին սիրելի են, որովհետեւ աշխատում են Սասնու անկախութեան համար և ժողովրդի օգուտն են ցանկանում. այն ինչ միւս իշխաններն օտար են ժողովրդի համար: Պարզ ասած չէ թէ Մարամելիքը, Չմշկիկ-Սուլթանը, Կաղզաւաճու ամիրան հա՞ն են, թէ օտարազգի բռնակալներ: Մեր կարծիքով, այդ բոլոր մանր իշխանները վէպի սկզբնական ձևի մէջ հաւ պիտի եղած լինին, որով և Դաւթի վարած պատերազմները նրանց դէմ կը լինէին հին նախարարական տների և թերեւ աւելի հին, սեպագրական ժամանակների իշխանութիւնների միմեանց դէմ ունեցած կռիւների պատկեր: Մարամելիքը վէպի ներկայ դրութեան մէջ ներկայանում է իբրեւ օտար տարր. մինչև անգամ թուլան Դաւթի մի կտորի մէջ Մարալ քաղաքում ցիւղում է «նմիրէ» բառը, որ մահմեդականների մինարէն է. բայց և այնպէս Դաւթի մայրն իւր կամքով գնում է Մարամելիքին կնութեան, որ մեր կեանքի մէջ հազաւագիւտ երևոյթ կը լինէր, եթէ ընդունենք, որ Մարամելիքն օտար ազգի և հաւատի է պատկանում: Զէնով Յովսէփը Չմշկիկ-Սուլթանին ուզում է Դաւթի համար կին. որով և Չմշկիկ-Սուլթանը պիտի հաւ լինի ազգով, ապա թէ ոչ, ինչպէս կարելի է ենթադրել, որ Դաւթի, որի զօրութիւնը Մարութալ բանձրիկ Աստուարածնի միաբանների խաւապատարազն է, մի օտար ազգի աղջիկ ուզէր իրան կնութեան: Նոյն ենթադրութեամբ հաւ պիտի լինին և Խանդուկ խաթունն ու Գոհար խաթունը. անորոշ է մնում միայն Հալէբալ թագաւորի ազգութիւնը. հաւանական է, որ նա օտար լինի, քանի որ միջին դարերում Հալէբի իշխողներն օտար են եղել, և նոյն լսկ Հալէբալ թագաւորն այն ժամանակի ազդեցութեան տակ պիտի վէպի մէջ մտած լինի, երբ որ հայերն սկսում են դէպի արեւմուտք՝ Կլիկիայի սահմանները դաղթել, և երբ որ այդ ժամանակներում հէնց Հալէբն սկսում է նշանաւոր դեր խաղալ և մէկ աշխարհակալից միւսի ձեռքն անցնել:

Սասնու իշխանների օտարների դէմ տւած կռիւներից մենք բերեցինք Թոռնիկ Մամիկոնեանի պատմութիւնը. հետաքրքիր է համեմատել Թոռնիկի պատմութիւնը Դաւթի վէպի հետ:

Օտարներն աւերում են ս. Կարապետը. Թոռնիկը սակաւաթիւ մարդկանցով գնում է վրէժ խնդրելու ս. Կարապետի աւերման համար. նոյնն անում է և թուլան Դաւթի, երբ որ Մարամելիքն աւերում է Մարութալ բանձրիկ Աստուարածնը: Թոռնիկը սակաւաթիւ մարդկանցով է, իսկ

Թուլան Դաւիթը մեծակ է վարում կուլը. և սա բնական է, որովհետեւ այն պատմութիւն է, իսկ այս դիւցադնական վէպ: Թոռնիկն օգնութեան է կանչում ս. Կարապետին, իսկ Թլօր Դաւիթը՝ Մարութալ բանձրիկ Աստուարածնին, խաչ-պատարազնին է ամեն անգամ ձայն տալիս և ուժ ըստանում:

Թոռնիկի կուլը Փիլառտոսի դէմ, որ նստում էր Մշարում¹⁾, արդեօք նոյն Դաւթի կուլը չէ Մարամելիքի դէմ: Մ. Ուռհայեցին՝ Փիլառտոսի համար ասում է. «Ի տղայութեանն կացեալ... ի վանք, որ կոչի Զօրվրի—Կողեոն՝ ի Հարսն—Մսրոյ գաւառին» (Ուռ. Մս. Բ. եր. 248). Մսրոյ բառը աղտուղ եզրկտոս աշխարհը պիտի չը հասկանալ, որի համար Ուռհայեցին անխտիր թէ եզրկտոս և թէ Մսրը է դորժ ածում, որովհետեւ Հարսն—Մսրոյ գաւառ է առած, և պիտի Հայաստանի գաւառներից մէկը լինի. իսկ Հարսն կամ պիտի Մսրալ գաւառի մէջ մի գիւղ լինի, որի մէջ, կամ մօտ, գտնուում էր վանքը, և կամ Հարսն—Մսրոյ երկուսը միասին գաւառի անունը լինի. ինչպէս լինի, մեզ համար այն նշանակութիւնն ունի, որ Փիլառտոսը մեծացել է մի գաւառում, որի անունը նոյնանում է Մարամելիքի Մսրալ գաւառի, քաղաքի անուան հետ: Մարամելիքը կէս հալ, կէս օտար խառնուրդ է ներկայանում վէպի մէջ. նոյնն է Փիլառտոսը, որի համար Ուռհայեցին ասում է. «ոչ հալ գիտելով զնա և ոչ հուռմ»: Մարամելիքի բնաւորութիւնն իսկ՝ խորամանկ, խարդախ, նենգաւոր և ստոր մի բռնակալ, որի համար ոչ մի սրբութիւն չը կալ, նման է Փիլառտոսի բնաւորութեանը. «Անօրէն և ամենաչար իշխան, անդրանիկ որդի սատանայի, ալը չարաշունչ, նեոն գիւլաբնակ և ալլանդակ, կարապետ պղծոն»... (Ուռհ. եր. 248): Մարամելիքի բանակում կան հալեր, գուցէ և ամենքը հալ են (վէպի սկզբնական ձևով անշուշտ և հալ կղած կը լինին), որ երևում է «փուշտ» և «փուշտ» գաւառական բարբառների արտասանութեան տարբերութիւնից. — Փիլառտոսի զօրքերն ևս մեծ մասամբ հալեր էին: Մսրը, ինչպէս ասել ենք, Մծուրը պիտի լինի,—Փիլառտոսն ևս ախրում էր Մծուրին և հէնց Մծուրի վրայով է գալիս Թոռնիկի դէմ կուլի, որովհետեւ Թոռնիկը նորան սպասում էր ձապաղ-ջրում, որ Մծուրի արեւելեան կողմում է.— վէպի մէջ ևս Մարամելիքի բանակը Սեղան-սարի գօտում է. «Ահազին ասգար ժողվեր են ու նստեր Սեղան-սարու գօտին»): իսկ Սեղան-սարի գօտին ձապաղ-ջրի սահմաններում է: Փիլառտոսը մարդ է ուղարկում Թոռնիկին, որ գալ, իրան հնազանդի, Թոռնիկը մերժում է²⁾. Մարամելիքն էլ Կողբաղ-

1) Հ. Զամէնանը կարծում է, որ Մշարը Մաշադը պիտի լինի:

2) Հետաքրքիր է Փիլառտոսի պատգամաւորները և Թոռնիկի մէջ եղած խօսակցութիւնն, որ Թոռնիկ պատմութեան մէջ բերել ենք Ուռհայեցուց հանելով. այդ խօսակցութիւնն իսկ վկայում է, որ Ուռհայեցու ժամանակ Թոռնիկ վերայ ժողովրդի է մէջ շատ զրոյցներ են պատմիլիս եղել:

նին է ուղարկում, որ եօթ տարւան խարջն առնի, արխնքն՝ հարկի տակ դնի Սասունը. Դաւիթը մերժում է, և ոչ միայն մերժում, այլ և Կողբադ-նի գլխին հակադրական խաղ խաղում: Փիլառտոսի մեծ բանակի դէմ Թոռ-նիկը կռւում է հաղար մարդով. նա, երբ որ թշնամիների բազմութիւնը տեսաւ, «դահի հարաւ լուծ, զի ոչ կարէր խուսել վերեսաց նոցա. պատե-րազմն էր կնչէր, զի սակաւ էին զօրք իւր»։—Նոյնը տեսնում ենք և Դաւթի վէպի մէջ. Դաւիթը, երբ որ ելնում է սարի գլուխը և Մարամիկքի աստ-ղերի թւով բանակը տեսնում է, սարսափում է և ասում.

«Էնոնք էլնեն բամբակ,
 Ես լէ էլնեմ կրակ,
 Չեմ կարալ զանոնք էրեցըցի.
 Էնոնք էլնեն գարնան մատղաշ գառներ,
 Ես լէ էլնեմ գարնան քաղցած դէլեր,
 Չեմ կարալ զանոնք կտրեցըցի»:

Բայց վերջն աստուածալին օգնութեանը ձայնելով, չարձակւում է բանակի վերալ և մեծ կոտորած անում, ինչպէս և Թոռնիկը, որ թէպէտև սկզբում վախեցաւ, բայց չետով սուրբ Կարապետին օգնութեան կանչելով, գրեթէ մենակ «ի քթթեւ ական ցիր և ցան կացուց զալնչափ բազմութիւն»:

Կռից չետով Փիլառտոսի կողմից Քափրը խաբում է Թոռնիկին և տա-նում է իւր մօտ. նորան մեծ խնջուք է տալիս և ուղում է խորամանկու-թեամբ սպանել, բայց Թոռնիկն աղատւում է մի քաջութեամբ, որ զիւ-ցազնի է վալել. Նոյնն անում է և Մարամիկքը. նա խորամանկութեամբ Դաւթին իջեցնում է ձիւս վրայից, իւր վրանն է մոցնում և առաջուց պատրաստած հորի մէջ ձգում. բայց Դաւիթը հորից դուրս է գալիս և սպանում է Մարամիկքին, ինչպէս Թոռնիկը Քափրին: Հ. Սրուանձտեանի վարիանտի մէջ խնջուքն անգամ լիշւած է. Դաւիթը Մարամիկքի մօտ կանաչ-կարմիր վրանում եօթն օր բրինձ—փլաւ է ուտում և չետով ըս-պանում Մարամիկքին: Դաւթի և Թոռնիկի մահն անգամ միատեսակ է. Թոռնիկին, երբ նա Քափրի զօրքերից փախչում էր, թագ կացած մի մարդ ծածուկ նետով խփում, սպանում է. Չմէկիկ-Սուլթանն ևս գութանի խո-փով ծածուկ խփում, սպանում է Դաւթին: Հ. Սրուանձտեանի վարիանտի մէջ Դաւթի մահն աւելի նման է Թոռնիկի մահին. «Շըմշըմ խանմի աղջի-կըն էր առեր մէկ նետ ու աղեղ, էկեր էր էդ տեղու փլերու մէջ թափը-տուեր էր: Դաւիթ ըդ Լօխօրալ ջրի մէջ կըլողգէր», Խլաթեցիներին ձեռ-քից փախած, որ «ըդ աղջիկ գողտուկ նետ մի զարկեց Դաւթի պառկի» ու սպանեց:

Բացի այս նմանութիւններից, Դաւթի իշխանութեան մէջ, բացի Սա-սունից, մտնում էին և Մշու չրջակայքը և ձապաղ-ջուրը, որոնց մասին

լիչեցինք Աբամելլեքի ճիւղի մէջ. նոյնը տեսնում ենք և Թոռնկի ժամանակ, այն է որ Թոռնկի ձեռքին էր Սասունը և Տարօնի մի մասը, անշուշտ Մշու և ձապաղ-ջրի կողմերը, որովհետև սրանք են Սասունին սահմանակից:

Այսպէս մեծ նմանութիւն է երևում Թոռնիկ Մամիկոնեանի պատմութեան և Դաւթի վէպի մէջ. այնպէս որ եթէ չ'ասենք թէ Դաւիթը մի և նոյն Թոռնիկն է, միայն ժողովրդի բերանում զիւրացական հերոս դարձած, դոնէ հաւաստեալ կարելի է ասել, թէ Դաւթի վէպը կազմւել է Թոռնկի նման շատ հերոսների արարքներից, որ ունեցել է Սասունը միջին դարերում, և կամ աչգ արարքների ազդեցութեան տակ ժողովուրդը մտցրել է աւելի հին վէպի մէջ իւր նոր ժամանակի հերոսական կոխները, որ աւել է օտարների դէմ:

է.

Ազգային վէպի մէջ եղած պատմական կէտերին մատնացող անելուց չետույ, պէտք է մօտաւորապէս որոշել թէ ո՞րքան հնութիւն կարող է ունենալ վէպի սկիզբը: Վէպի միւս կոչումն է և «Մհերի դուռ»: «Մհերի դուռ» անունով կոչւում է և վանալ բերդից դէպի արևելք ձգւած լեռնագօտու միջին մասը: Այդ լեռնագօտին, որի արևելեան գլուխը կոչւում է «Չրմիզըմի մաղարա», իսկ արևմտեան ծայրը «Ագրիի», վէպի մէջ կոչւում է «վանալ քար» կամ «Տոսպան բլուր», և ծածկւած է բնեռագիր արձանագրութիւններով, և իւր մէջ ունի խորին հնութիւն ունեցող քանդակագործ շինութիւններ և անցքեր: «Մհերի դուռը» հէնց դրան ձևով տաշւած, սիրուն քառանկիւնի չըջանալով մի քար է, որ վրան ունի սեպագիրներ: Այդ դրան ետևում իբրև թէ կալ մի ակր, Մհերի ակրը, որի մէջ փակւած է Մհերը՝ թէ տեղական աւանդութիւններով և թէ վէպի երկու վարկանտով: Որովհետև Մհերի վէպը կապւած է Տոսպան բլրի այս քանդակագործ շէնքերի և սեպագիրների հետ, պէտք է կարծել թէ Մհերի վէպն ևս պիտի ունենայ նոյն հնութիւնը, ինչ հնութիւն որ ունին այդ արձանագրութիւնները, ալսինքն՝ վէպի նիւթը պէտք է վերցւած լինի սեպագրական ժամանակներից: Եթէ վանալ և առհասարակ Հայաստանի սեպագիրները կարդացւած լինէին, խօսք չը կալ, շատ բան կը պարզէր վէպի մէջ. միայն ասորոց և պարսից սեպագրութիւններից չալտնի է, որ Հայաստանի մէջ ամենահին ժամանակներում եղել են մի քանի իշխանութիւններ՝ վանալ արևելեան կողմում Բիւլմալ իշխանութիւնը, որի միջին մասը կոչւած է եղել Տուսպա, որ Տոսպն է. երկու Տիգրիսի հովիտներում Նալիրի իշխանութիւնը, իսկ Տօրոսեան լեռների մէջ, ուր Եփրատը հանդիպում է Տօրոսին, — Մեկիտա: Այդ երեք տէրութիւնը, ինչպէս և Մուսամիր, որ վանալ լճի հիւսիսային-արևմտեան կողմում է եղել, դանւել են վարարադի

(Արարատի) տէրութեան գերիշխանութեան ներքոյ Նրանք 500 տարւալ չափ կռիւներ են ունեցելթէ առանձին առանձին և թէ միասին, ասորեստանցոց հետ Գ—Ը. դարը Քրիստոսից առաջ։ Այդ տէրութիւնները հարկաւ կ'ունենային և ներքին կռիւներ, որոնք չափնի պիտի լինէին նրանց ժամանակներից մնացած հալկական սեպագիրներից, որ անընթեռն ինչ են։ Արդեօք ազգային վէպը, իւր սկիզբնականում, իբրև նիւթ, հիմք չէ՞ ունեցել հէնց այդ տէրութիւնների իրար հետ և ասորեստանցոց հետ ունեցած լարաբերութիւնները։ Այս ենթադրութիւնը թուլ ենք տալիս մեզ անել, ի նկատի ունենալով նախ ան, որ, ինչպէս ասացինք, Մհերի վէպը կապւած է Տոսպան բլրի սեպագիրների հետ, և նրանց մասին եղած աւանդութիւնները միանում են Մհերի վէպի հետ։ Սրկորդ՝ ազգային վէպի իրողութիւնը հէնց կատարւում է այդ սեպագրական տէրութիւնների տեղում—Վան (Տոսպ), Տիգրիսի հովիտը (Նախիլի), Արածանու և Հիւսիսային Սփրատի հովիտը (Մծուր, Միլիտտա), Վանալ ծովի հիւսիսային-արևմտեան ափը (Խլաթ) և աւելի հիւսիս՝ Արարատում՝ Կաղզուան։ Սրկորդ՝ Արամելիքն և Սանասարը, ինչպէս և պատմական ցուցմունքներից տեսանք, ասորեստանցոց Սենեքերիմ թագաւորի Ադրամելէք և Սանասար որդիքը պիտի լինին, իսկ Սենեքերիմն ապրում էր նոյն այդ սեպագրական տէրութիւնների ժամանակում, Քրիստոսից մօտ ութ դար առաջ։ Չորրորդ՝ վէպի մէջ եղած Սանասար, Արամելիք, Մելքիսէթ, Յովան, Դաւիթ, Սաուլ և այլն անուններն էլ թերևս ցոյց են տալիս ասորեստանցոց, սեմական տարրի հին ազդեցութիւնը, եթէ միայն կարծելու չը լինինք, որ այդ անունները քրիստոնէութեան ազդեցութեան տակ փոխանակած են հին հայկական անունների։ Հինգերորդ՝ վէպը լի է աջակիսի դրութիւններով և պարագաներով, որոնք գոյութիւն կարող էին ունենալ միայն այդ սեպագրական, դիցադեական ժամանակներում, երբ որ ամենաչն քաջութիւն և արարք վերագրւում էին միայն թագաւորներին և իշխաններին։

Վէպի սկիզբը սեպագրական տէրութիւնների ժամանակից ենթադրելով, կարող ենք ասել, որ վէպի հնութիւնը հասնում է մինչև Ը. դարը Գ. առաջ, երբ որ ապրում էր Սենեքերիմը, և մինչև երբ, ըստ ասորոց սեպագրութիւնների, Հալաստանի սեպագրական տէրութիւնները կռիւ են տւել ասորեստանցոց դէմ։ հէնց այդ ժամանակներից, ազգային պատմութեամբ ևս, Հալաստանի քաղաքական վիճակը փոխւում է, Հալաստանում կազմւում է թագաւորութիւն։

Սակայն վէպի երեք ճիւղերն ևս միատեսակ հնութիւն չեն վկայում։ Արամելիքի և Մհերի ճիւղերն աւելի հին են երևում, ան ինչ Դաւիթի ճիւղը համեմատաբար աւելի նոր։ Առաջին ճիւղի մէջ լիչւում է կռապաշտութիւն, թէպէտև ոչ հալի համար, իսկ Դաւիթի ճիւղում կռապաշտութիւնը բացալատ չէ երևում, այլ զրեթէ ամբողջապէս քրիստոնէութիւն։—Մարութալ բանձրիկ Աստուածածին, Խաչ-սլատարադ, տէրտէր, ս. Նշան, Մսէ

խաչ, չուր Գրիստոս գալ դատաստան, և ալլն, սովորական են Դաւթի ճիւղում (աւելի հ. Սրուանձտեանի վարկանտում). բացի ալլ՝ Դաւթի վէպի մէջ, ինչպէս տեսանք, դուրս է գալիս աւելի միջնադարեան պատմական կեանքը, — անպէս որ կարելի է կարծել, որ Դաւթի վէպը նոր ժամանակների ստեղծագործութիւն է և իրեն մի հատուած մտել է Արամիւնքի և Մհերի աւելի հին վէպերի մէջ, որոնք սկզբնական ժամանակների հետ են կապւած թէ տեղով և թէ անուններով ու անցքով, Մհերն իսկ, որի անունը նույնացնում են Միհր աստուծու անունն հետ¹⁾, իւր բնաւորութեամբ և արարքներով ներկայանում է ոչ իբրև քրիստոնեայ ժամանակի ծնունդ, այն ինչ Դաւթը մի բարեխիտ քրիստոնեայ մարդու տիպ ունի: Բայց և անպէս, չէ կարելի ասել, որ Դաւթի վէպը բոլորովին նոր է. միայն Դաւթը ժողովրդի համար աւելի սիրելի դիւցազն լինելով, նորա վէպըն աւելի է ենթարկւել նոր ժամանակի ազդեցութեան, և աւելի նոր է երևում: Դաւթի վէպն անպէս զեղարեւսութեան կապւած է Արամիւնքի և մանաւանդ Մհերի վէպի հետ, որ չէր կարող նրանցից բաժանւած անկախ և նոր վէպ լինել, ուրեմն պէտք է ունենայ նոյն հոսքիւնը, ինչ որ ունին առաջին և վերջին ճիւղերը:

Դաւթի վէպի հոսքեան ամենից գլխաւոր ապացույցը հէնց այն է, որ նա իւր բոլոր մանրամասնութիւններով կատարեալ դիւցազներգութիւն է, և ոչ զուտ պատմական վէպ. իսկ իւր կեանքի պատմական շրջանում, միջին դարերում, մեր ազգը չէր կարող ստեղծել դիւցազներգութիւն, ալ միայն կարող էր հին դիւցազներգութիւնն աւանդել բերնէ բերան և տալ նորան իւր ժամանակակից կեանքի երանգը:

Ը.

Դիւցազնական վէպն ստեղծւում է մի ազգի մէջ այն շրջանում, երբ որ ազգը նոր է դուրս գալիս բնութեան իւր վերայ թողած անսահման ճնշման տակից, երբ որ նա սկսում է մաքառել բնութեան տարերակեան ուժերի դէմ, որոնք, ժողովրդի երեակալութեան մէջ մարդկային կերպարանքի դժագրութիւն ստացած, արգելքներ են դնում նոր զարգանալ սկսող ազգի առաջ. Ազգը, հետզհետէ լաղթելով բնութեան արգելքներին, նշմարում է իւր մէջ ուժ ու զօրութիւն, և այդ ուժն ու զօրութիւնն ամփոփում է ոչ հասարակ մարդկանց մէջ, այլ անպիսի անձնաւորութիւնների մէջ, որոնք ժողովրդի իղեալը — գաղափարն են կազմում. նրանք դիւցազներ՝ դից սերունդ են և ունին դերբնական ուժ, որ ստանում են կամ աստուածներից

¹⁾ Материалы для изучения Арм. нарѣчій, вып. II. յառաջարանի մէջ եր. III.: Հ. Սրուանձտեանի Հրատարակութիւնը չ'ունենալով, մենք ձեռքի տակ ենք ունեցել պ. Պատկանեանի Հրատարակութիւնը:

և գերբնական արարածներից ժառանգարար, և կամ նրանց իրանց շնորհած գերմարդկային տուրքից: Դիւցազները չեն կռոււմ հասարակ մարդկանց հետ, այլ իրանց նման հսկաների հետ, գերբնական արարածների, չար ուղիների, հրէշների և վնասակար գազանների հետ, որոնցից զիւրացնը ազատում է մարդկային ազգը կամ իւր ժողովուրդը: Դիւցազների ալդ կռիւը բնութեան տարերական ուժը պատկերացնող տարերական տխրանքների և հրէշների դէմ՝ ներկայանում է իբրեւ ժողովրդի կռիւը բնութեան ճշող ուժերի դէմ:

Դիւցազներդութիւնը ժողովրդի խաշնարածական կեանքի մտաւոր արտադրութիւնն է, իբր որ ժողովուրդը դեռ մտաւոր զարգացման և ինքնաճանաչութեան ստոր աստիճանի վերալ է լինում: Բայց երբ որ ժողովուրդն սկսում է երկրագործութեամբ զարապել, և երբ նորա միտքն սկսում է լաւաջաղիմել, բերանացի ուսման փոխանակում է գրաւոր ուսումը, բերանացի վիշատակութեանը գրաւոր վիշողութիւնը, ալսինքն՝ ժողովուրդը պատմական կեանքի մէջ է մտնում,—նա ալ ևս շատ չէ հաւատում գերբնական հսկաների և դիւցազների գոյութեանը. նա տեսնում է, որ հասարակ, բայց իմաստութեամբ և քաջութեամբ օժտւած մարդիկն ևս կարող են անել ալն, ինչ որ առաջ դիւցազն հսկաներն էին կատարում, և ստեղծում է պատմական անձինք իբրեւ հերոսներ: Սակայն ժողովրդի մէջ դեռ երկար ժամանակ կենդանի ապրում են հին դիւցազների արարքները, որոնք սիրելի են դարձած նորան. երկար դեռ պատմական անձինքների վէպի հետ ժողովուրդն ակորժով պատմում է իւր հին դիւցազների քաջագործութիւնները, միայն թէ խառն պատմականի—իրականի հետ, որովհետև ինքը պատմական չըջանում է ապրում և պատմական կեանքի կնիքը պիտի դրոշմէ և հին վէպերի վերալ,—մինչև որ վերջապէս ալդ կէս-դիւցազնական և կէս-պատմական վէպերին փոխանակում են զուտ պատմական վէպեր, իսկ հին դիւցազնական վէպերը դառնում են հէքիաթ, որին ժողովուրդն ալ ևս չէ հաւատում թէ իրօք կատարւել է մի ժամանակ, և որի մէջ գործող անձնաւորութիւնը, տեղն ¹⁾ ու ժամանակն ալ ևս սրու չեն լինում:

Սասունցի Դաւթի և Մհերի վէպը ներկայանում է մի ալսպիսի կէս-դիւցազնական և կէս-պատմական վէպ, որի մէջ դիւցազնականը և պատմական—իրականը իրաւունւած են իրար հետ, թէ շատ հին ժամանակի պատմականը և թէ միջնադարեան ժամանակի պատմականը:

Մոկացոց և սասունցոց բերնից, բնական է, որ մենք լսենք հին դիւցազնական վէպի մնացորդներ, բացի ուրիշ պատճառներից, որոնց մասին նացոց ենք եղել, և ալն պատճառով, որ Հայաստանի ալդ կողմիւրի ժողո-

1) Ս. Պալստանեանի «Պատմութիւն գրականութեան Հայոց»: Յ. Вусмевъ-тъ «Очерки русской народной словесности».

վուրդը միակ ժողովուրդն է, որ առանձնացած ինքնուրույն կեանքով է ապրել, որի մէջ քաղաքակրթական զարգացումը ոչ միայն հնումը, այլ և նորումս դեռ ոտք չէ կոխել։ Հին ժամանակներին սկսած՝ ալդ կողմերի հասերը համարել են իբրև լեռնական կէս-վայրերի ժողովուրդ, որոնց կեանքը նման չէ եղել միւս կողմերի հայերի կեանքին, և որոնք պահել են իրանց վարք ու բարքի բրտութիւնը։ Թովմա Արծրունին Ժ. դարում ապալես է նկարագրում ալդ լեռնականների կենցաղը. «Հնարաւորեալ լապրուստ անձանց (բնակիչք Սիւմ լերինն), վճարեն զկարևոր պէտս իւրեանց լի աշխատութեամբ և սաստիկ տառապանօք. և բնակութիւնն նոցա ի խորաձորս և ի փապարս լերանց, և ի պրակս մայրեաց, ի գազաթունս լերանց։ Եւ բնակեն առանձին ըստ տունս աղզաց, և անչափ ի բացեալ են միմեանց, մինչ թէ ոք լարանց զօրաւորաց ի բարձրաբերձ տեղեաց ուժգին խանչիցէ, հագիւ թէ ուրեք կարիցէ առնուլ զբոմբին ձայնին... Կէսք վրիպեալք ի բնական հայրենի լեզուէն, լաղազս հեռաբնակ լինելոյ և անհամբուլք միմեանց հանդիպեալք, և խօսս եղեալ կարկատուն մուրացածի բանիւք... Զպէտս կերակրոց վճարեն ի սերմանց ինչ, առաւել ի կորեակ կոչեցեալ սերմանէն... և զնոյն ոռոգեալ ոտիւք ի միջոցս պրակացն, կամ երկմատնի վարտատովք սերմանեալ. և է զգետտ նոցա ասուիս ի ծածկովթ մերկութեանն և օլ ոտիցն հնարաւորին զձև կօշկաց, ի մորթոյ ածից կաղմեալ, և միով կերակրու և միով հանդերձիւ բաւականանան զամառն և զձմեռն. և են ստացեալ զէնս աշտեալս հանապաղ կրկնով ընդ ինքեանս, ի պատրաստութիւն գաղանաց, որք ի լերինն բնակին։ Այլ ևս ի ժամանակս հասելոյ թշնամեաց լերկիրն իւրեանց գան միաբան լեռնայինքն չօգնութիւն իշխանացն, զի են տիրասէրք... Եւ են գաղանաբարոյք արկեարծուք, առ ոչինչ համարելով զսպանումն եղբարց հարազատաց, նաև զանձանց ևս... Սքա են գոեահք ասորոց, ուր չուեցին զկնի Ադրամեյալ և Սանասարալ որդուլ Սենեքերիմ արքայի թագաւորի Ասորեստանի, և Նինուէի, չորոց անուն ինքեանք Սանասնալք զինքեանս անուանեն» (Թ. Արծրունի, Բ. դպր., եր. 134—135)։

Թովմա Արծրունու նկարագրած սույն նախնական պարզ և միանգամայն բիրտ կեանքով են ապրում և ցալժմ Տօրոսի ալդ կողմերի հայերը, որոնք, մինչդեռ ուրիշ կողմերի հայերը մի տեսակ ձերացած ու մաշած են, մեր ազգի աւելի երիտասարդ ու թարմ մասն են կազմում, ուստի և մինչև այժմ մոռացած չեն իրանց նախնու—Սանասարի և նորա ժառանգների վէպը։

Թ.

Դաւթի և Մհերի գերբնական ուժն ու զօրութիւնն իրանց նախնիքներից է գալիս։ Նրանց նախնիքը՝ Սանասարն և Աբամելիքը՝ հասարակ հողածիններ չեն—«Ահագին ու քու քէֆով զըռ բըղբսս մարդ էն ըդ

երկու աղբէր»։ «Աբամելիք ընդար զօրեղ էր, որ օր տասն տան տեղ կը փորէր, ու տասն տուն կը շինէր. ըն մէկէլ լէ զփէտեր կը բերէր, ու բանուածքը երկուսով կը շինէն... ընքան զօրեղ էն՝ որ քարէ սան քարէ սուն դարկեցին, ձաք թալեցին, թամամեցին զբերդ»։ Ահա հսկաների ձեռքով կանգնած բնորդերի (օգուզի բերդեր) շինութեան սլարզ նկարագիր, բերդերի, որոնք Հալաստանի շատ կողմերում կան, որոնք ալժամ ևս դարմանք են պատճառում տեսնողին իրանց մունջ, անարձանագիր տեսքով և իրանց մասին եղած մութ աւանդութիւններով։ Բայց ինչպէս էլ զօրեղ լինէին, Աբամելիքն ու Սանասարը չեն հանդիսանում իբրև կատարեալ հսկաներ և դիւցազներ. նրանք մարդ-հսկաներ են, որոնք իրանց ուժը ժառանգաբար մի աստուծուց կամ գերբնական արարածներից չեն ստացած. նրանք աւելի զօրեղ ու քաջ են, քան թէ հասարակ մարդիկ։ Աբամելիքի և Սանասարի բոլոր արարքները հասարակ մարդն ևս կարող է անել, միայն աւելի երկար ժամանակում, մեծ զուարութեամբ ու խելքով. աչն ինչ նրանք, իբրև ոչ սովորական մարդիկ, իրանց ուժով կարճ միջոցում են անում։

Թէպէտև Աբամելիքն ու Սանասարն ալապէս սոսկ մարդուց քիչ վեր են, բայց նրանց վերջին շառաւիղները՝ Դաւիթն ու Մհերն արդէն կատարեալ հսկաներ, դիւցազներ ևն դուրս գալիս։ Դաւիթ ծագումը մեր վարիանտով՝ հասարակ մարդուց չէ. նորա ցեղն ամբողջապէս հսկապական է. մեծ հսկալ պէտք է եղած լինի, ինչպէս երևում է պատմութեան ընթացքից, և Դաւիթի հայրը, որի վէպը չ'ունինք, Դաւիթի ցեղի զօրաւոր մարդն միայն իւր ցեղի մարդը կարող է սպանել, և կամ մի գերբնական ուժ. եթէ ուրիշ ցեղի հսկալից էլ սպանւելու լինի պէտք է Աբամելիքի ցեղի հսկան գերագոյն զօրութեան շնորհից ընկած լինի, ինչպէս Դաւիթը Չմշկիկ-Սուլթանից սպանւելու ժամանակ. Սակաչն հ. Սրուանձտեանի վարիանտով՝ Դաւիթը դարձեալ սպանւում է Աբամելիքի ցեղից ծագած մի աղջկալ ձեռքով, մինչդեռ ուրիշ մարդ չէ կարողանում դիպչել նորան, չը նայելով որ նա գերագոյն զօրութեան աչքից ընկել էր։ Պարոն Ասողիկը, երբ որ Դաւիթի ձեռքով նետահար է լինում, կանչում է. «Ա՛խ, էս մեր աղգակնի դարբերն ի՛՛ ձի խասա»,—ալսինքն թէ՛ մեր զարմի մարդու հարւածը միայն կարող էր ինձ խոցել. և այս նշանով Պարոն Ասողիկը ճանաչում է Դաւիթին։

Թերևս ուրիշ վարիանտներով Աբամելիքն ու Սանասարը սերւած լինին մի որ և է աստուծուց, կամ իրանց ուժը ստացած լինին գերագոյն զօրութիւնից, այդ չը կալ նրանց համար. բայց Դաւիթի համար, որ մեր վարիանտով հանդիսանում է արդէն իբրև հսկաների սերունդ, հ. Սրուանձտեանի վարիանտում չիւած է թէ նա «դիւանական ճիժ» (ղեկի զաւակ) է. Խօլբաշին իւր՝ Դաւիթից լաղթիւին արդարացնելու համար, ներկայացնում է Սասնու ամբուլիւնը և սասունցիների հսկալութիւնն ու քաջութիւնը. նա

ասում է. «Էն ճ ժ եր՝ որ նոր են էլած՝ դիւանական էն»։ Ուրեմն սասուն-
ցիները «դիւանական ճ ժ եր», այսինքն «դեւերի աղն», սերունդ են. Ռոստա-
ւորի մէջ—ալդ կտորը ոտանաւոր է, ուստի և հնութիւնից եկած պիտի
լինի—լիւած Սասնու ճ ժ երը, տղաները (ինչպէս և վէպի մէջ շատ տեղ
լիւած «Սասնու ճ ժ երը»), հարկաւ, պէտք է հասկանալ Սասնու իշխա-
նական, հսկայական տղաները, և ոչ ռամիկ ժողովուրդը, որ ամբողջ վէպի
մէջ բնաւ մասնակցութիւն չ'ունի, բայց եթէ ա՛յն՝ որ Դաւիթն ու Մհերն
իրանց մանկութեան ժամանակ, մէկն անգլիտակցաբար, միւսը կամաւ,
նեղ տեղն են ձգում նորան. մանաւանդ թէ խօլբաշու ասած «դիւանական»
խօսքն իսկապէս միայն Դաւիթն է վերաբերում, որովհետեւ խօլբաշու մա-
նուկներին (զինուորներին) մանուկ (ճիժ) հսկալ Դաւիթն էր միայն կոտո-
րել և լցրել «ի խարաման» (դժոխք, Արմինի տեղը թափել), առանց մէկի
օգնութեան. ուստի և խօլբաշին աւելի Դաւիթի քաջութիւնն ու դիւա-
նական ու թիւնը պէտք է գովէր քան թէ ռամիկ սասունցիներին, որոնք
անունով միայն գոյութիւն ունին։

Այսպէս տեսնում ենք, որ Դաւիթն և Դաւիթի զարմի մարդիկը—
Սասնու իշխանական ցեղը—«դիւանական ճ ժ եր» են, «դեւերի զաւակ,
աղն» են. իսկ զեներ կամ դիւերը (դիւք, դիւք), որոնց մասին լետու խօսք
կը լինի, հնդիկ-եւրոպական աղբիւրի մէջ եղել են երկնքի և լուսոյ աս-
տուածութիւն, որով և հսկալ Դաւիթը դիւերի կամ գրաբարի դիւց (բար-
դութիւններին մէջ միայն գործածական հոլով) սերունդ է, դիւցաղն է, ալս-
ինքն՝ երկնքի և լուսոյ աստուածութեան զաւակ է։ «Դիւցաղն» բառի
կազմութիւնից երևում է, որ մեր հին հսկաները, որոնք ընդհանուր ա-
նունով դիւցաղն են կոչուել, համարուելու են եղել դիւերի (դեւերի) կամ
դիւց, երկնքի և լուսոյ աստուածութեան սերունդ։ Նույնը տեսնում ենք և
ռուսաց-դիւցաղնական վէպում, որի մէջ ռուսաց հսկաները (богатырь)
համարում են կրակի և լուսոյ աստուածութեան—Дажь-богъ-ի սերունդ,
թուռներ ¹⁾։

Դաւիթը, բացի իւր ժառանգաբար ստացած դիւցաղնական ուժից,
անպաղթելի զօրութիւն է ստանում և գերազույն զօրութիւնից. նորա ուժն
ամեն անգամ չափ ու սահմանից անց է կենում, երբ որ նա դիմում է
աստուածային բարձր զօրութեան՝ և կանչում է՝ «Մարութալ բանձրիկ Աս-
տուարածին, խաչ-պատարաղին»։

«Մարութալ բանձրիկ Աստուարածին և խաչ-պատարաղին» խօսքերն
արդէն իրանք վիպում են քրիստոնէական ազդեցութիւնը. Կիրակոս վար-
դապետ Գանձակեցու պատմութեան մէջ լիւած է. «Այ և ամբագոյն եր-
կիրն Սասնոյ եկին ի հնազանդութիւն թաթարին... Բայց զեկեղեցիս ոչ

¹⁾ Буслаевъ-ի Русск. богатыр. Эпосъ.

քակեցին, և ոչ դանձիւ նշխարս սրբոց՝ զոր ժողովեաց սուրբն Մարութա լամնադն ազգաց և եղ անդ, զի քրիստոնեաք որի զօրուն՝ ծանուցին թաթարին զպատիւ ճոցա (նշխարաց), ալ և ինքեանք պատմէին բազում տեսիլս զսրբոցն, ի վերաջ պարսպին լոյս սաստիկ ծագեալ և արս լուսատեսիլս երեսալ՝ (Կիր. վ. Դանձ., ծթ. գլ.)։ Սոյն Մարութալի շինած բարձրիկ Աստուածածին վանքն է, հարկաւ, և վէպի մէջ ընչաւ Մարութալ կամ Մարաթուկալ վանքը, որ, ինչպէս Կիրակոս վարդապետի խօսքերից երևում է, Սասնու գաւառում մեծ ժողովրդականութիւն ունեցող մի սրբավայր է եղել։ Այդ վանքում, Թուան Դաւթի վէպի հատածից գիտենք, որ նստում էին քառասուն եւրիսկոպոս, քառասուն վարդապետ, քառասուն աւագ-սարկաւագ, և սարկաւագ, որոնց բան ու գործը միայն ալն է եղել, որ, Սասնու տէրերի հաշտով ապրելով, ժամ-պատարագ և աղօթք ու խնդրածք պիտի անէին Աստուծուն, որ Աստուած ուժ ու կարողութիւն տար Սասնու տէրերին։ Դա մեր իշխանների պատմական կրօնասիրութիւնն է, որ զուրս է գալիս վէպի մէջ։ Եւ, արդարեւ, Դաւթի անչաղութիւն ուժը կալանում է հէնց իւր պահած վանքի միաբանների աղօթքի և խաչ-պատարագի մէջ։ Բայց ո՞վ կարող է ասել, որ այդ քրիստոնէական վանքն ու խաչ-պատարագինը չեն փոխանակած որ և է հեթանոսական սրբավայրի, աստուածունու կամ պաշտամունքի, քանի որ վէպի ըսկիրը, Աբամիլիք և Սանասար, կռապաշտական ժամանակներից է, իսկ ս. Մարութալի շինած վանքը, ինչպէս և մեր վանքերի մեծ մասը, կարող է մի հեթանոսական սրբավայրի տեղում շինւած լինել։ Թերեւս հեթանոսականի աղիցցութեան տակ պատարագ խօսքն ևս փոխւած լինի պատարագի ն)։ Այս ենթադրութիւնն անել տեղիք է տալիս մեզ ալն, որ ժողովրդական վէպը, շատ դարերի ընթացքում ժողովրդի բերանում ապրելով, մեզ հասնում է խիստ օտարտի և մէկմէկու հակասող անախրօնիլմներով և անհամապատասխան դրութիւններով լցւած։ Նրբնմ մի և նոյն անձնաւորութեան մէջ անգամ ժողովրդական վէպը խառնում է զանազան ժամանակի և զանազան բնաւորութեան պատկանող գծեր, թէ որ և է հեթանոսական աստուածութեան, թէ որ և է քրիստոնէական սրբի, և թէ պատմական անձերի։ Այդ խառնուրդն աւելի սպասելի է կրօ-

1) Պատարագի խօսքը կարող է և ուրիշ նշանակութիւն ունենալ և ոչ պատարագ, ինչպէս մենք ենք ենթադրում։ Պէտք է նկատել և այն, որ Աստուածածին խօսքը մեկացին անխտիր թէ Աստուածածին և թէ Ասպարածին էր արտասանում։ Հ. Սրբանձեանը «Մանանայում», Վանից գէպի Հիւսիս, մօտ ութ ժամ Հեռաւորութեամբ, ծովի ափին գտնւած Խաթուն Տերամբ ս. Աստուածածնի վանքի մասին գրում է. «Այս տօնը (վանքի տօնը) կ'անուանեն Ասպարածնի տօն»։ և գիւղի և վանքը մէկ անունով Ասպարածին կ'անուանեն. այն ինչ Աստուած Ասպած, Աստուածածին Ասպածածին կ'արտասանեն վանքից, այստեղին Ասպարածին անունը կուտան կամ Խաթուն Տերամբը (Մանանայ, եր. 123)։

նական հաւատալիքների և դիւցական. անձերի ընաւորութեան մէջ, որովհետեւ ժողովուրդը, մոռանալով իւր հին, հեթանոսական դիցաբանութիւնը, իւր վէպի մէջ աւելի լեւնարան ունենալու համար՝ առասպելական էակներըն ու հաւատալիքները փոխադրում է պատմական հողի վերաւ և նրանց տալիս է ժամանակակից հասկացողութեան պատկերացումը. նա փոխում է իւր դիւցազունների անուններն անգամ և, դրոց ազդեցութեան տակ, նոր անուններ է տալիս նրանց: Բայց և այնպէս, հին հաւատալիքների և առասպելական պատկերացումների հետքերը, իբրեւ մի հին շերտ, դարձեալ մնում են նորագոյն ժամանակներում կենդանի մնացած վէպի կազմութեան մէջ: Շատերից վիշնք միայն իբրեւ օրինակ քրիստոնէական սրբեր ա. Կարապետի և ս. Սարգսի մասին պատմած աւանդութիւններն ու հաւատալիքները, որոնց մէջ, եթէ անուններն և մի քանի քրիստոնէական կամ դրոց ազդեցութեան տակ մտած լատելածները դուրս ձգելու լինինք, կը մնալ զուտ հեթանոսական վիշողութիւն:

Այսպիսի փոփոխութեամբ պէտք է վէպի մէջ մտած լինի և խաչպատարազին խօսքը, որ վէպի մէջ դուրս է գալիս ոչ իբրեւ խաչպատարազի իմացական զօրութիւնը, ինչպէս քրիստոնեաներս ենք հասկանում, այլ իբրեւ մի նիւթական, զգալի առարկայ: Դաւիթը չղքում է սանդղի առաջ, լալիս, աղօթում է, և, որովհետեւ ինքն էլ արժանաւոր էր, իւր հօր խաչպատարազինը ինքն իրան, իբրեւ մի թռչուն, իբրեւ մի ոգի, թռչում դալիս, նստում է Դաւիթի աջ թևի վերաւ: Հ. Սրուանձտեանի վարիանտում՝ խաչպատարազինի փոխանակ վիշում է «ս. Նշան» կամ «Մսէ խաչ» (միս, մսէ՝ պղինձ, թէ՛ ուրիշ բան է նշանակում), որ Դաւիթը ոչ իբրեւ հալածական ժառանգութիւն, ինչպէս մեր վարիանտում է, այլ ինքը. նոր է ստանում երկնքից, և ստանալու եղանակը պատմած է հեթանոսաբարձր—«Դաւիթ քնաւ, տեսաւ երազ. առաւ քառսուն երկնջ ու զնաց վրը սըբ բանձրիկ Մարաթուկալ. մատղեց զերնջներն ու լողզցաւ մըջ արունին. շատ լաց ու աղաչաց Աստծու երեսն ու վե. իջաւ Աստծուց ուրան սուրբ Նշան մի ու սանդր մի. համբուրեց զսուրբ Նշան, դրեց աջ ծոցքի թարափ, ու սանդր լէ դրեց ձախ ծոցք»: Երկնջն իբրեւ մատաղացու քրիստոնէութեան մէջ ընդունւած է մեղանում. բայց չալտնի է թէ հէնց այդ մատաղն էլ հեթանոսութիւնից է դալիս, երբ որ աստուածներին անարատ մատաղներ էին զոհում, նրանցից չաղթութիւն ստանալու համար, ինչպէս Դաւիթն է անում Մարամեղքի դէմ կռւի գնալուց առաջ: Իսկ մատաղների արեան մէջ լողանալը անշուշտ մի հեթանոսական սովորութեան կամ ծէսի մնացորդ է, որ պէտք էր կատարել աստուածներից իրանց խնդրածքն ընդունելու համար:

Ինչպէս և լինի ստացած, հեթանոսաբար թէ քրիստոնէաբար, Դաւիթն ունի գերազույն զօրութիւնից մի խաչպատարազին կամ Մսէ խաչ, որ նորան գերմարդկային ոյժ է տալիս: Դա՛ Դաւիթի լուսութքն է, լուսութ-

քը, որ չալանի է և մեր հին հեթանոսական վէպերից՝ «Յուռութք, ուլունք նամիրամայ», դա մի և նոյն լուռութքն է, որ ալժամ էլ, իբրև հեթանոսութեան մնացորդ, շատ տարածած է մեր ժողովրդի մէջ, որ պահում է չարաչքից, չար ոգուց, որ օ. Կարապետից լարախաղացութեան և ըմբշամարտութեան շնորհք ստացողները միշտ կրում են իրանց վերնու, որպէս զի իրանց ուժ ու քաջութիւն տալու Դաւթի ալի լուռութքը և այն զօրութիւնն ունէր, որ եթէ հսկան նորանով երդւէր, անպատճառ պէտք է իւր երդումը պահէր, ապա թէ ոչ՝ նա՝ խաչ-պատարազինը՝ կը խաւարէր իւր թեկի վերայ, և հսկան նորա տւած դերքնական ուժից կ'ընկնէր, թէպէտև ոչ ժառանգական ուժից, ինչպէս և պատահում է Դաւթի հետ։ Այսպէս՝ անպարտելի զօրութիւնը միացած է ուխտապահութեան հետ, և խաչ-պատարազինը ներկայանում է և իբրև ուխտապահութեան մի դերքնական էակ, ոգի կամ աստուած, որ երգմիազանքներին պատժում է, զրկելով նրանց ուժից, ինչպէս հեթանոսութեան ժամանակ Միհր աստուածն է եղել, որի անունը նոյնանում է Դաւթի որդի Մհերի անուն հետ։ Հետաքրքիր է և այն, որ հ. Սրուանձտեանի վարիանտով՝ ս. Նշանի հետ երկնքից իջնում է և «սանդըր», որ դարձեալ հեթանոսական մնացորդ պիտի լինի («Սանդըր» մեր հէքիաթներում էլ վիշտում է իբրև կախարդական առարկայ, որ ղիւցազներ ստանում է դերքնական կանանցից—հուրիններից կամ հրեղէն աղջիկներից, երբ որ գնում է անմահութեան ջուր կամ խնձոր բերելու վերադարձին ղիւցազներ սանտրը գետին է ձգում և դառնում է անանցանելի անտառ, որ փակում է ղիւցազներն հալածող աւելի զօրեղ դեկ կամ հրէշի ճանապարհը։ Աղագլին վէպի մէջ սանտրը ներկայանում է իբրև սուտ երգման նշան, որի վերայ պիտի երդւէր Դաւթը, եթէ ուզում էր, որ իւր երդումն իրան չը փնտէր։

Այսպէս՝ տեսնում ենք, որ Դաւթը, ինչպէս և ամեն մի ղիւցազն, վէպի մէջ հանդիսանում է իբրև դեներից (աստուածներից) սերած, ղիւանական հսկաների ցեղի ժառանգ, որ բացի իւր ժառանգական ուժից՝ դերքնական ուժ է ստանում և մի ղիւցական զօրութիւնից կամ էակից, որպիսին վէպի մէջ խաչ-պատարազինն է։ Դաւթի հսկալական ժառանգական ուժն ամենից առաջ չալանում է այն ժամանակ, երբ որ նա, դեռ փոքր, անգէտ երեսակ, իւր մօր մօտ Մարամելիքի տանն էր ապրում։ Մարամելիքը իւր նման փառլեանների հետ գնում է գ ու ը ղ խաղալու ¹⁾։ Դաւթին էլ ակամայ տանում, նստեցնում է հեռու

1) Գուրգը մեր հէքիաթներում սովորական զէնքն է, որ գործ են անում հրակայ հերոսները. դա մեկնույն լախար պեռէ լինէ, որ Յովհան Մամիկոնեանի ծառան ժողովրդական զրոյցներէջ վերցրած պատմութեան մէջ ամենագործածական զէնքն է։ Լախար մի հնդկաձայր հաւաղան է (երբեմն ծաղիկն խաղաղանի նման փոկ ամբացրած, որից և շճժլախտի և շլախտի խաղերն իրանց անունն

տեղում, որ մտիկ տալ իրանց խաղին. բայց խաղի ժամանակ շարժում է Դաւթի դիւցազնական ոգին և նա թռչում, հսկայորէն բռնում է Մարամիւլիքի չարդած, խփած գուրգը, որով և Մարամիւլիքի սուր աչքն իսկոյն նկատում է, որ Դաւիթը հասարակ մարդ չէ և նորան ցու է ուղարկում իւր հօրեղբոր մօտ:

Ժ.

Ձէնով Յովանը Դաւթին գտնարած, հորթարած և նախորդ է կարգում, և իշխանական ծագում ունեցող, Սասնու տէր Դաւիթը հովուութեամբ է պարապում: Այս հովական պարապմունքը հէնց վէպի մէջ վկայում է վէպի հնութիւնը, ալն ժամանակին, երբ որ բոլոր ժողովուրդը, տէր և ծառայ, հովական կեանք էին վարում, աէրն իւր հօտերն էր պահում, ծա-

կն առել) և համապատասխանում է ռուսաց հսկաների (догатырь) սիրելի ղէնքին (паша): Գուրգ են գործ ածում և պարսից փահլեւանները: Բայց թէ գուրգով կամ լախով ի՞նչպէս էին խաղում մեր փահլեւանները, վէպի մէջ պարզ առած չէ: Խորենացու պատմութեան մէջ այսպիսի յիշատակութիւն հնք գտնում. «Ի մանկական խաղուն երկէցս պատահեաց Շաւասպայ Աբերկունոյ զգնդակն հանել ի Շապհոյ: Եւ նորա ածեալ նմա մականաւն՝ ապէ. ծանկի զքեզ: Իսկ նորա պատասխանեալ, թէ այո՛, ապէ, ճանաչեմ և զիս արքայորդի ի սերմանէ Սահասարայ... Եւ զայս առացեալ յոյժ քամահաբար ի ձեռք ահարանէն արքայազնաց լինէր» (Խոր. Գ. գր. 55 գլ.): Այսպիսի մի մականական խաղ մինչև այժմ մնացած է մեր ժողովրդի մէջ. խաղացողներըց ամեն մէկն առնում է ձեռքը մի գաւազան. ասպարէզում ձգում է մի գնդակ, որ խաղացողներըց մէկն աշխատում է մականով տանել, ձգել որոշեալ տեղը, իսկ միւս խաղացողները իրանց մականով պէտք է գնդակին խփելով հեռացնեն որոշեալ տեղից, բայց պէտք է այնպէս խփեն գնդակին, որ նա՝ որին պատկանում է գնդակը, և որ ուզում է որոշեալ տեղը տանել, չը կարողանայ իւր գաւազանով հարած իջեցնել խփողին, ապա թէ ոչ՝ զարնուած մարդը պէտք է փոխանակէ զարկողին և ինչքն սկսի գնդակը դէպի որոշեալ տեղը տանել գաւազանով: Ինչպէս երևում է, Խորենացու յիշատակած մականական խաղը, որ մեր Թաղաւորների և նախարարների սիրելի խաղն է եղել, սոյն ժողովրդական խաղը պէտք է լինի՝ նոյն խաղը կամ նորա նման մի խաղ՝ պէտք է լինի և Յովհան Մամիկոնեանի պատմութեան մէջ շատ տեղ յիշատակած «գնդի խաղը», մականական կոչումը խաղի գաւազանից, իսկ «գնդի» կոչումը խաղի գունդից առնւած: Գնդի խաղը յիշում է և մեր ժողովրդական երգերի մէջ իբրև Թաղաւորական խաղ.

«Սուրգանն ի մօլդան ելել,

Իւր ոսկի գունդն կու խաղայ» (Քնար. Հայկ., եր. 130):

Երգի մէջ յիշւած մօլդան—մէյդանը Խորենացու մէջ ձեռք ահարան է յիշում, որ միւսնոյն ասպարէզն է. ինչպէս երևում է, մականական կամ գնդի խաղը ձեռք էր լինում, որի համար պէտք էր բնարքայական ասպարէզ: Գնդի խաղի տեղի ընդարձակութեան համար վկայում է և Յ. Մամիկոնեանը (Յ. Մամ., Վեներտիկ, 1832, եր. 28): Ազգային վէպի մէջ յիշած «գուրգ խաղը», որ խաղում են հսկաները, կարելի է ենթադրել, որ պատմութեան մէջ յիշւած մականական կամ գնդի խաղը լինի, որ խաղում էին մեր Թաղաւորներն ու նախարարները:

ուան իւրը: Տիրոջ և ուամկի հովւական հաւատար եղբայրութեան պատկերը լաւ նկարագրւած է Դաւթի և իւր «աղբէր» հորթարածի տիպերում: Ալդպիւսի հովւական կեանքի ժամանակ է միայն ստեղծւում զիւցաղներգութիւնը, և ալդպիւսի ժամանակում ստեղծւած լինելով և աղգալին վէպի նախնականը, բնական է, որ իշխան Դաւիթը պարապէր խաշնարածութեամբ: Վէպի մէջ վիշոււմ է երկրագործութիւնն ևս, բայց ալդ երկրագործութիւնը վէպի գլխաւոր հերոսների համար ըմբռնելի չէ, նրանց համար չէ: Դիւցաղն Դաւիթը մինչև անգամ, որովհետև ինքը երկրագործական ժամանակի ծնունդ չէ, արհամարհում է երկրագործութիւնը և ոտի տակ է տալիս պառաւի կամ աւետրի կորեկի արտը. նա չը գիտէ և չէ կարողանում հասկանալ, թէ կորեկ ցանելով կարելի է ապրուստ անել և թէ ինքը կորեկը ոտի տակ տալով պառաւի և իւր (ինքն էլ ալդ պառաւի մօտ էր ապրում) ապրուստն է կտրում, թէպէտև պառաւը նորան ալդ մասին աղջարարում է: Հ. Սրուանձտեանի վարիանտում կալ մի գեղեցիկ հատւած, որի մէջ պատմւում է, թէ ինչպէս երկու անգամ առաւելաւ չը տեսած», ալսինքն՝ աշխարհի մէջ շատ բան չը տեսած, չ'իմացող Դաւիթն ինքը լծւում է գոմէշների տեղ և վար անում. «Այը քաշէր զգութան կը հանէր սարու գլուխ, ու ընդիէն կը քաշէր բերէր ցած»: Դաւիթն ալս բանն անում է ոչ թէ նորա համար, որ իւր ուժը վար անողներին ցոյց տալ, որի համար կարիք չ'ունէր, ալ նորա համար, որ «տեսաւ որ գոմշտանք չըբուց զուրանց լեղուն թաւեր են գուրս ու գութան կը քաշեն. Դաւթի խեղճ եկաւ ըզուոնց վրէն. արձկնց զգոմշտանք»: Արձակեց, որովհետև հովիւ Դաւթին անհասկանալի և անհերքելի է խեղճ անասուններին ալդպէս տանջելը. թէպէտև նա կը սպանէր էլ կենդանիներին, բայց նա կը սպանէր ապրելու համար, իսկ ի գուր տեղը վար անելով չէր տանջիլ, որովհետև նա չը գիտէր թէ արտն ինչո՞ւ են հերկում:

Հովւութեան հետ պէտք չէ մոռանալ, որ նախնական ժամանակներում կից պարապմունք է եղել որսորդութիւնը. և մենք տեսնում ենք, որ երկրագործութեամբ չը պարապող Դաւիթը պարապում է և որսորդութեամբ. նա նետ ու աղեղով և բազէով որսորդութիւնն անգամ գերադասում է քան կորեկ ցանելը. նա որսորդ է ոչ իբրև որսորդութեամբ զարմացող աղնական, իշխան, ալ իբրև նախնական ժամանակի հովիւ—որսորդ: Որսորդութիւնն է Մհերի միակ պարապմունքը. նա մինչև անգամ հովւութիւն չը գիտէ:

Հովիւ Դաւիթը հասարակ հովիւ չէ. նա խաշնարած ժողովրդի գաղափարաւոր է, զիւցաղն հովիւ է: Նորա սօլերը (կօշիկները) պողպատէ են և ոչ կաշուց, նորա կօշը (ցուպը) պողպատէ է և ոչ փայտից,—մի բան, որ մեր հէքիաթներում իսկ գործ են ածում միայն ալն մարդիկը, որոնք երկար տարիներով առասպելական հեռաւոր ճանապարհ պիտի կարեն. իսկ մեր Դաւիթը գործ է դնում միայն նորա համար, որ ինքը

սոսկական հողածին չէ, ալլ դիւցազն, որի համար կաշին ու փաւոր չընչին բաներ են և չեն դիմանալ, որովհետեւ նա մի՛ օրում աւելի շատ պիտի ման գալ, քան երկար տարիներով ճանապարհորդողները. նա մի՛ օրում պողովատէ կօշիկը պիտի կտրատէ, պողովատէ ցուպը մաշէ: Եւ ի՞նչ պէս չը մաշէ, քանի որ նա անքան արագոտն ու քաջոտն է, որ արագավազ նապաստակներին անդամ, ետեւերից վազելով, հաւաքում է լեռներից, և աղւէս, գալլ, նապաստակ, արջ, առիւծ, վաղր մի տեղ ժողովում լեռներից, հնազանդեցնում է իրան, խառնում իւր հօտին ու նախրին և, առջին արած, քշում դէպի քաղաքը:

Դաւթի ալսպիսի գերմարդկալին արագավազութիւնը տեսնելով, մարդ ակամաջ լիշում է Քաջոտն Աքիլլէսին, որի արագընթացութիւնից անգամ անցնում է մեր Դաւթի ոտքերի ոլժը: Զը մոռանանք լիշելու, որ լանկթամուրի մասին ևս դաշտերից կենդանիներին ժողովելու և ալսպիսի արագավազութեան մի գրուց է պատմում մեր ժողովրդի մէջ:

Սակայն սորանով միայն չէ արտապատում մանուկ դիւցազնի ներքին ոլժն ու զօրութիւնը, որով նա զսպում է միասակար գաղաններին և անմեղացրած՝ խառնում է անմեղ կենդանիների հետ. նա իբրև դիւցազըն պէտք է կուէր և գերբնական արարածները—չար ողինների հետ, որոնցից պէտք է մաքրէր աշխարհի երեսը:

ԺԱ.

Յայտնի է, թէ մեր հեթանոսական գաղափարներէ մէջ ի՞նչ մեծ դեր են խաղացել դեերը, խարամանի (Արհմնի) ոգիները, որոնց մարմնաւորութիւնները բազմաթիւ դժգեղով չըջում էին երկրի վերաջ մեր հեթանոս հայերի գաղափարով: Անկարելի է, որ մեր հին դիւցազնական վէպերում ալլ դիւական տարրը մեծ տեղ բռնած չը լինէր, և մեր վէպերի դիւցազնները կուէնէր կամ լարաբերութիւններ ունեցած չը լինէին դեերի հետ: Հնութիւնից մեզ շատ բան չէ հասել ալլ մասին, բայց եթէ մեր ալժմեան ժողովրդական հէքիաթներին դիմենք, որոնք, ինչպէս մի անգամ նկատեցինք, մեր հին դիւցազնական վէպերի մնացորդներն են, ակնյալունի տեսնում ենք, որ դեերը մեծ գործող անձնաւորութիւններ են եղել մեր վէպերում: Ոչ մի հէքիաթի հերոս արժանաւոր հերոս չէ, եթէ նա մի քանի անգամ չէ կուէլ դեերի դէմ, և նրանցից մի քանիսին սպանելով, աշխարհն ազատել նրանց աւերմունքից:

Մեր ժողովրդի արդի հեթանոսական գաղափարով, դեր մի վերացական, աննիւթ ոգի կամ էակ չէ (պէտք չէ շփոթել քրիստոնէական սատանալ—դևի հետ¹⁾), ալլ մի մարմնեղէն, անհեթեթ արարած, մարդկալին

¹⁾ Ժողովրդական գաղափարով հասկացած դերը քրիստոնէական դէմ հետ չը շփոթելու համար, ոմանք գրում են դէվ. բայց մենք նոյն գրութիւնն ենք

անարդիլ կերպարանքով, որ մարդկօրէն բաղմանալու, սիրելու և ատելու, ուսուցիչ և խմելու չատկութիւններն ունենալով հանդերձ, օժտւած է չափազանց ուժով, որ զեր միշտ ի չարն է գործ դնում մարդկանց վնասելու համար: Բաց այդ խօս ուժ ունեցող բաղմակոտ զները միշտ ստոր են մարդկային մտքի հանճարեղութիւնից, որով և միշտ նրանք չաղթւում են մարդ-հսկաների ձեռքով, որոնք՝ իբրև հետագայ, աւելի զարգացած սերնդի գաղափարներ՝ թէ ուժով և թէ խելքով ու հնարագիտութեամբ լերազանցում են նախորդ սերնդի գաղափար զն-հսկաներից: Դեռ ևս ապրում են խոր դուբերի և մթին ակերի մէջ ոչ թէ մեծակ, այլ իրանց կողալներով և իրանց զն մալրերի հետ: Նրանց գլխաւոր պարագմունքն է որսորդութիւն, որով և միայն ապրում են: Նրանք մերթ մերթ մարդկային աշխարհ են¹⁾ դուրս գալիս կողոպտու վերցնելու և մանաւանդ սիրուն աղջկաներ փախցնելու իրանց կնութեան համար: Բաց զների սերունդը դորանով չէ միանում երբէք մարդկային սերնդի հետ, որովհետև այդ աղջկաներից նրանք զաւակ չեն ունենում, նրանց մալրերն իրանց նման հրէշ-զներ են: Իսկ իրանք զները մարդ չեն, այլ մարդակեր են, սաստիկ ատուա են հողածին մարդուն և արհամարհում են նորան «հողածնութեան» համար, որից երևում է, որ իրանք հողածին չեն, այլ զիցական սերունդ, գերմարդկային էակ,—թէպէտև իրանք նոյն հողածինների ձեռքով սպանւում են, որով և իբրև անմահ ոգիներ չեն հանդիսանում:

Այս է մեր ժողովրդի արդի գաղափարը զների մասին, որոնք խորին հնութիւնից են հասել մեզ, և որոնք մեծ դեր են խաղացել անշուշտ անժամանակ, երբ որ հպերը լիովին հաւատ էին ընծալում ալգալսի արաբածների գոլութեանը: Սակայն զները, իրանց պաշտամունքի սկզբնական ժամանակում, չարութեան և խաւարի ոգիներ չեն եղել. զներն եղել են և բարի աստուածներ, որոնք հնդիկ-եւրոպական ազգերի մէջ ներկայացրել են երկնքի և լուսոյ աստուածութիւն: Դեռ կամ դեռ բաւական չէ գալիս տիւ բառից, որ սանսկրիտներէն նշանակում է լուսաւոր, որից և չունաց մէջ երկնքի աստուած Դիտսի (Ջեւ) կոչումն է և մեր դիւք (աստուածներ) խօսքը, որի ուրիշ գրութիւնն եղած պիտի լինի դիւք, որովհետև բարդութիւնների մէջ սեռականում վերականգնւում է և տառ՝

Թողնում է նկատել ունենալով, որ քրիստոնէական դէպ մի և նոյն հեթանոսական դէպ է, միայն քրիստոնէական իմացութեամբ ըմբռնւած: Դեռ խկապէս պէտք է գրելէր դէպ, կամ դէպ, որովհետև ուրիշ ձևն է դիւ (բարդութիւններէ մէջ), բայց որովհետև ե-ից յետոյ հայերէնում է կամ — չէ գրւում, նախնիք գրել են Կ-ով՝ դէպ:

¹⁾ Ժողովրդի հաւատալիքով կայ մի աւանձին ազգերի աշխարհայ կամ ազգաստան, որի բնակիչները միայն դէպ են, և ուր նստում է դէպեր Թաքաւորը: Դեռ ևս ասանք պէտք է շփոթել Մոմ և Լոյս աշխարհներէ. հետ, որոնք ուրիշ իմացութիւն են պատկերացնում:

դիք—դից, դիւք—դիւց (դիւց—աղն)։ Այս ցոյց է տալիս, որ հայոց մէջ եւս սկզբում դեկրը բարի և լուսաւոր էակներ կամ աստուածութիւն պէտք է եղած լինին, և նրանց պաշտամունքը շատ նշանաւոր և գրեթէ միակ տեղը բռնած պիտի լինի, որ նրանց դիք կոչումը հետագայում համանիշ է դարձած աստուած բառի հետ։ Սորան վկայում է և հալ ժողովրդի մէջ մինչև այժմ մնացած գրույցները դեկրի մասին։ Գեկրի կամ դիւց լուսաւոր աստուածութիւն լինելը մեղանում երևում է և մեր տիւ և դիւց աղն բառերից. տիւ, որ մի և նոյն դե կամ դիւ (դիււանք) բառն է, նշանակում է ցերեկ, օրւայ լուսաւոր մասը, իսկ դիւցաղն նշանակում է դից կամ դեկրի սերունդ. ժողովուրդը իւր սիրելի հերոսներին, ինչպէս «դիւանական ճիւղ», այսինքն դեկրի զաւակ—դիւցաղն Դաւիթն է, հարկաւ, բարի և լուսաւոր դեկրի սերունդ կը համարէր, և ոչ չար ու խաւար դիւանքի։ Բացի այդ մեր հէքիաթներին մէջ մինչև այժմ եւս գեռ մութ կերպով պահւած է դեկրի բարի աստուածութիւն լինելու փշոգութիւնը, որովհետեւ պատահում են և այնպիսի դեկր, որոնք եղբայրանում են կրտսեր կամ մարդանման հսկաների հետ և նրանց օգնում են ուրիշ դեկր կոտորելու։ Գեկրն, իբրև բարի էակներ, փշտում են և ուրիշ աղգերի գրույցների մէջ. իսկ իբրև բարի, լուսաւոր աստուածութիւն մինչև այժմ կազմում է եղիդիների աստուածաշատութեան հիմունքը Մալաք—Տաուդի անձնաւորութեան մէջ։

Ժողովրդի բանական զարգացման հետագայ շրջանների մէջ բնութեան տարերաւան ուժերի ներկայացուցիչ նախնական աստուածները, տիտանական հսկաների տիպում մարմնացած, ինչպէս դեկրն են, աստուածութիւնից իջնում, դառնում են թշնամի հրէշներ կամ հսկաներ ու տիտաններ. այս փոխակերպութիւնը կատարւում է կամ նորա համար, որ իրերի հին կարգի ներկայացուցիչ աստուածութիւնն ալ եւս պէտք չէ գալիս ժողովրդին իւր հետագայ կեցութեան փոխած հանգամանքներում, և կամ նորա համար, որ հին դիցաբանութեան տարերաւան աստուածները հետագայ մտաւոր զարգացման շրջանում, բնականաբար, թւում են հրէշներ և զարհուրանքներ։ Տարերաւան աստուածութիւնից տիտանական տիպ ունեցող հրէշներ են դարձած և դեկրը, որոնք սկզբում լուսաւոր էակներ են եղել, իսկ հետագայում խաւարի և չարութեան ոգիներ։ Եւ որովհետեւ բոլոր տարերաւան հսկաները՝ իբրև իրերի հին կարգի ներկայացուցիչներ՝ պէտք է լետ մղեն իրանց ժառանգների ձեռքով, որոնք նրանց տեղն են անցնում կամ ժառանգաբար և կամ նրանց լաղթելով, ուստի և մարդանման հսկաները կամ դիւցաղները մեր հէքիաթների մէջ կոտորում են դեկրի մեծ բազմութիւն։

Ազգային դիւցաղնական մէպը ստեղծւած լինելով ալն շրջանում, երբ որ ժողովրդի բանական զարգացումը տարերաւան խօշ հսկաների հաւատալից անցնում է մարդանման հսկաների հաւատալիքին, անշուշտ պիտի չը մոռանար և իրերի հին կարգի ներկայացուցիչ դեկրին։ Դիւցաղն Դա-

«Ի՞նչ իւր հորթարածութեան ժամանակ հէնց ունենում է կռիւ արն դեւերի հետ, որոնց դիակներին անգամ Գեռի Թորոսը վախենում և փախչում էր։ Դաւիթը բացակա է լինում իւր ընկեր հորթարածի մօտից։ լեռան ալբից ելնում են քառասուն հարամի—խարամանի դեւեր ու զարնում, նորա հորթերը տանում են։ Դաւիթը լետ դառնալով իմանում է եղելութիւնը և գնում է դեւերի ետեից։ Նա գնաց, կանգնեց ալբի դռան ու «հողի մէկ ձէնով բռնաց, սարսափ թափաւ վրը ըդ դեւերուն»։ Դեւերն ելնում են, որ խոնարհութեամբ ծառայեն Դաւթին, որ նա իրանց չը կոտորէ։ Բայց «մէկ մէկ զուրս էլան, Դաւիթ մէկ մէկ կօպալ զարկեց ու քառասունի գլուխ էլ գնաց ու ջանդակ մնաց»։ Զետո՞ւ Դաւիթը «մտաւ էրի մէջ, տեսաւ, որ գօլօն մի ոսկի է, մէկ արծաթ, աշխրբքի մալ ու դօլլաթ, քանի ուր պապ մուտը է, ըզոնք աւերութիւն էրած են, ու լցած էդ էր»։

Դեւերը մեր հէքիաթներին մէջ ներկայանում են իբրև տէր հարստութեան—ոսկու և արծաթի, որոնցից, սակայն, չեն օգտւում նրանք, այլ միայն պահպանում են։ Այդ ոսկին ու արծաթը նրանք ձեռք են բերում կամ ասպատակութեամբ աշխարհից վերցնելով, ինչպէս վէպի մէջ, կամ գետնի տակին եղած թանկագին մետաղներին տէր դառնալով։ Գերմանական և ռուսական վէպերի մէջ, դեւերի փոխանակ, վիշապներ են գանձի պահպան դուրս գալիս։ Ռուսաց հսկալ Գորբիճիա Նիկիտիչը, Դաւթի պէս մանուկ հասակում, մտնում է վիշապի ալբիւրը, սպանում է նորան, և նորա ոսկին, արծաթը վերցնում։

Վիշապներն էլ մեր հէքիաթներում անծանօթ չեն։ Կարելի է ասել՝ դեւերի հետ հաւասար գործող անձեր են։ Բայց Դաւթի վէպի մէջ չեն զուրս գալիս վիշապներ, որոնց դէմ կռւելով Դաւիթն աշխարհն ազատէր նրանցից, ինչպէս Վահագն վիշապաքաղը, որ սոցնպիսի կտրճութիւնների համար անշուշտ վիշապաքաղ է կոչւել։ Դիւցաղն Դաւիթը միայն դեւերից է աշխարհը մաքրում։

(Կը շարունակւի)